

Ինկողմանեալ ընդ հովանուց
 Ի լուր երգոցըդ հոմաձայն
 Կիրհէ 'ի քուն խաղաղական .
 “ Դու և Ո՛ուսայց կաս 'ի կահառ ,
 Արպէս լըսեմք յըստոյդ բանէ .
 Ոմէ զիտես , ո պատմէ զայս ձառ .
 Ենակիրէոն զրուցաբաննէ ,
 Որ քան զայլ մարդ 'գ քեզ սիրտանայր .
 Ու 'ի թելս քնարին քաղցրերգանայր :
 “ Արծաթափայլ է քո թեփիկ .
 Ասէ , և զլուխ ունիս գոհար .
 Յօղն անուշակ քո կերակրիկ ,
 Եւ քո իրանք նուրբ և պայծառ ,
 Եւ անմարմին և անմարիւն
 Դիցն անսիսհից դու գու հանգոյն :
 “ Ինդ հովանեաւ անտառակին
 Աստեղնախիտ և ստուերամած
 Ի լուր քո քաղցըր նըւազին
 Դայ Ապողոն ընդ կամենայց .
 Եւ խոնջ , ասէ , դու հընձողի .
 Դիւրես ըզիսիստ վաստակին անդի .
 Ոմէ իմաստունն յոզնահանձար ,
 Օորոյ Ծ ընորհք և Օուարթութիւն
 Վըձնէն նըւազս և ըզքընար՝
 Այսափ 'ի քեզ եզիտ արդիւնս .
 Օ ի բաջաղես դու շաղակրատ
 Ուըզիմնդ՝ ածել սրմին արտատ :
 Դղդիմ ջատուկ զիարդ բզզայ .
 Եւ հ ատեցի զջանըս նորուն .
 Որկորաժէտ և անդեղեայ
 Հարդ բարդ կուտէ զեւզ համբարուն .
 Ինդ քեզ իսեթիւ հայի անարդ
 Պանդոյր , ձայնէ , ծոյլ և գատարկ .
 Ակային ոչնչ է . սիրտ ագահ
 Խեթիւ հայի ընդ ծազը և խաղ .
 “ Երգեաւ , ասէ , մինչ ես 'ի ձահ
 Այժմէն նիւթեմ վասն աւուրց պաղ ,
 Պատափանի յիմում սրտի
 Երգելս քեզ 'ի ցրտի .
 “ Յօրժամ պաղին օղբըդ վերին
 Եւ ձիւն երկինք տեղան սաստիկ
 Վովալըլուկ և ցրտագին
 Վահ է , զուես , մահ շրջմոլիկ .
 Փոր իմ գատարկ և նըւազի , —
 (Կ անդր , ասեմ , չիք քեզ տեղի .
 “ Արով զբօսար յամարայնի
 Երգը և ցուցս յօրինելով ,
 Եւ այժմ 'ի ցուրտ ձըմերայնի

Եւ 'ի կաքաւ վազեա պարով .
 Հիւծեալ պահօք թեթեացար ,
 Հապա 'ի գաշտ խայտա 'ի պար .
 Պատափանի տուր լրենուոյն ,
 “ Ոմէ վիշտք իցեն կենաց բաժին .
 (Ճըպիոն , ասա քըսմոս ձըճոյն),
 Կրկայն ամօք կեաց դառնազին .
 Եւ ցորչափ կեաս՝ քեզ ըշկարծեմ
 Ոմէ ոք գտցի նախանձընդդէմ :
 Խակ թէ յերկնուստ մեզ 'ի պարգե
 Ընորհեցան կեանքս 'ի հեշտ վայել
 Եւ մուսայից խառնեալ 'ի թէ
 Հաղորդ լինիմ բարեացն ընտել .
 Ը ատ խակ կեցի , և թէ մեռայց
 Մոռացօնս խսպառ չանկայց .
 ՅՈՎԵԱՆԵԿՍ ՄԵԼԻ ՍԻԿԻՒՐԱՑԻ

ՀԵԽԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Եթուուելի մօր նոր գոտուած սեպացն արքա .
 Կագրութեանց վրայ համառօք ուշունակի :

Են ՑԵԱՆԵՐԻ Ծ անտրայի Ասիական
 Ընկերութիւնը մեծ ժողովք մը ըրաւ
 Մորուց երկրէն եկած հետաքնին հնու-
 թեց լուրերը քննելու համար , զորքերեր
 էր Ասօլինսըն զնդապետը , որ Պարոն
 Եւ յարտին հետ քանի մը տարիէ վեր
 է Կինուեկի կողմերը գետինը փորելով
 շատ հնութիւններ և սեպաձե ըսուած
 արձանագրութիւններ գտան՝ Մորիս
 տանեայց հին ձեռագործներէն մնացած ,
 Մոնց քննութիւնիմացուեցաւ որ հիմա
 կուան Կիմրութ (Աեբրովթ) ըսուած
 տեղը , ուր որ շատ հնութիւններ զլ-
 տան , բուն Կինուե ձանցուած տեղն
 է , հապա անոր շնութեան տակնեն .
 Բը շնուած Քալահ կամ Քալէ քա-
 ղաքն է , որ մեր Մոտուածայունի
 թարգմանութե մէջ Քաղան դրուած
 է . իսկ բուն Կինուեին տեղը՝ Եյարո
 կը կարծէ որ ըլլայ այն բարձրեկէ ըլ-
 լուրն որ Ուուսուլի քով է Տիգրիսի ան-
 դիու կողմը , ուր որ հիմայ Յովոն

Տարգարեին գերեզմանն կը կարծեն, և մահմետականք ալ մեծ պատիւ տալով չեն ուզեր որ զային այն տեղոյն : Իսոր մօտ երկու գեղ ալ կան խորապատ և Քանինձուք, երկու հին քաղաքներու տեղ, թէպէտ գեռ ց ստուգուեցաւ որ քաղաքներն ըլլալին :

Այս տեղերուս վրայ գտուած ու պաձե արձանագիրներէն հիմայ այս շափս իմացան, որ Քաղաքի կամ Եկեղիւթի հիւսիսային արեմուեան կողմը շինուած պալատը՝ Խորայելացւոց Եղիպատուեն գառնալու ատենները շինուած է, իբրեւ 1500 տարի Քրիտոսէ առաջ, և թէ նոյն ժամանակները վեց թագաւոր ետեւէ ետեւ՝ Եինուէի մէջ թագաւորեր են . ասոնցմէ մէկն է այն պալատան շինողն Արդանաբազոս անունով, որ յայտնի է թէ վեց եօթն հարիւր տարիով հին է քան զանուանի կնամարդի Արդանաբազը, որուն ատեն Ասորեստանեայց ինքնակալութիւնը կործանեցաւ . արձանագրութեան սկիզբն է այսպէս . “ Այս ապարանք են Արդանաբազու խոնարհ երկրը . ոլոգուի (աստուածոյն) Աստարաքայ . . որ է Եսրաք չաստուածը զոր սուրբ Դիկք կը յիշեն ”, և որուն դիմաց Եենեքերիմ թագաւորը երկրը պազութիւն ընելու ատեն՝ երկու որդիքը զինքն սպանեցին և փախան ՚ի հայաստան . արձանագրութեանը մէջ Աստարաք հայր և թագաւոր և խնամակալ աստուածոց կանուանի, մէկ խօսքով ամենէն մեծ աստուած, կամ Արոնոս ըստ Յունաց : “ Եցն թագաւորին համար կը ըսէ արձանագիր մը, թէ մեծ անապատէն անցնելով զնաց հարկ առաւ Տիւրոսի, Աիդոնի և Փիւնիկիոյ ուրիշ թագաւորներէն : Աւրիշ արձանագիր մ’ալ Արդանաբազին որդին կը յիշէ Դաւմումքար անունով, որ 30 տարի թագաւորեր է, շատ կտրիճ և անգութ մարդ է եղեր, շատ պատերազմներ ըրեր է, շատ տեղերու տիրեր, շատ տեղ ալ աւրըշտրկեր է, շատ

աւար ու գերի առեր է, և պատերազմի մը մէջ հազար իշխան ջարդեր է . 30 տարիին վերջը յագնելով կամ ձանձրանալով՝ ինքը ետ կեցեր է պատերազմէ, բայց իր տեղ իր գործակալաց մէկը կը զրկի եղեր՝ նոյնպէս աւրելու և աւարելու : Այս բազմայազթ թագաւորիս վրայօք ուրիշ արձանագրութիւն մ’ալ զառեցաւ հսկայածե ցուլի մը վրայ փորագրած, ուր առած աւարներուն մէջ կը յիշատակուին ուկի, արծաթ, ձի և կրկնակուզ անապատի կենդանի, որ է ուզտ :

Այս և ասոնց նման արձանագրութիւններ Ասիոյ հին պատմութեանը մեծ լոյս պիտի տան . մանաւանդ թէ, բոլորովինն նոր դուրս պիտի հանեն աշխարհիս ամենէն հին մեծ ինքնակալութեան այսինքն Ասորեստանեայց պատմութիւնը, որոնց թագաւորներուն անունը միայն ունինք, և չենք գիտեր թէ 1300 տարի ինչ կերպով բոլոր Ասիոյ միապետ եղան, հանդերձ իրենց թոյլ բարքովը :

* *

ԱՇԽԱՏԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշքերի Քաղաքներուն Վրայ ուղեկութիւն :

Աշքերի մէջ Քաղաքիլ ըստուած ազգ մը կայ որ շատ ատենէ ՚ի վեր Արագներուն հետ նոյն կը կարծուեր, սակայն ձննչուեցաւ որ Քաղաքիները անոնց հետ նմաննութիւն մը չունենալէն զատնաե անսնց թշնամի ալ են :

Արագներուն մազերն ու աշուքները ուեն . իսկ Քաղաքիներունը կապուտ, և ընդհանրապէտ իրենց երեսի գոյնը Արագներէն աւելի Ճերմակ է : Արագներուն երեսը երկայն է, և բարձրավիզ են . իսկ Քաղաքիներունը քառակուսի և կարծնավիզ են :

Արագները ծոյլ են, ընդհակառակն Քաղաքիները աշխատիլ կը սիրեն . աշ